ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2023 թվականի մայիսի 19-24-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ԿԱՀԿ ազգային պատվիրակների համաշխարհային ասամբլեայի 90-րդ տարեկան գլխավոր նստաշրջանին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել են միջազգային ստանդարտներին, անվտանգ միջազգային առևտրի հեշտացման, աշխարհում հակամանրէային դիմադրողականության, բարձր ախտածնությամբ թռչնագրիպի վիրուսին առնչվող թեմաները: ԿԱՀԿ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի պատվիրակների, Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի հետ քննարկվել են տարածաշրջանում շրջանառվող կենդանիների դաբաղի վիրուսի SAT-2 շտամի Հայաստանի Հանրապետություն ներթափանցման ռիսկի, տվյալ շտամի պատվաստանյութի, Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման և սպանդանոցների հետ կապված թեմաները: ԿԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի հետ քննարկվել են տարածաշրջանում կենդանիների անասնահամաճարակային իրավիճակին առնչվող թեմաները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   ԿԱՀԿ Ռուսաստանի Դաշնության պատվիրակ, Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավարի տեղակալ Կ. Սավենկովի հետ քննարկվել են ինչպես

Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանմանն առնչվող, այնպես էլ տարածաշրջանում շրջանառվող կենդանիների դաբաղի վիրուսի SAT-2 շտամի Հայաստանի Հանրապետություն ներթափանցման ռիսկի հետ կապված տվյալ շտամի պատվաստանյութի ձեռք բերմանն առնչվող հարցերը: Վրաստանի ԿԱՀԿ պատվիրակ Վ. Բասիլաձեի և ԵՄ այլ երկրների ԿԱՀԿ պատվիրակների հետ քննարկվել են սպանդանոցների գործունեությանն առնչվող հարցերը՝ մասնավորապես պետություն-մասնավոր սեկտոր համագործակցությանն ուղղված հարցերը: ԿԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Բ. Պլավշիչի հետ քննարկվել են տարածաշրջանում կենդանիների անասնահամաճարակային իրավիճակին առնչվող հարցերը, ինչպես նաև կենդանիների մերձսահմանային հիվանդությունների ներթափանցման ռիսկերին առնչվող հարցերը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավարի տեղակալ Կ. Սավենկովի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել դաբաղի SAT-2 շտամի պատվաստանյութ ձեռք բերելու ուղղությամբ օպերատիվ կերպով կազմակերպել աշխատանքները, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կողմից պատվիրված պատվաստանյութն ակնկալվում է հնարավորինս շուտ մատակարարել:

Վրաստանի ԿԱՀԿ պատվիրակ Վ. Բասիլաձեի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել սույն թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի սննդամթերքի ազգային գործակալության և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրման վերաբերյալ («ԼԵՓԼ» սննդամթերքի ազգային գործակալության, «ԼԵՓԼ» գյուղատնտեսության պետական լաբորատորիայի, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև գործընկերության զարգացումն է՝ փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ոգով հավասար իրավունքներով համագործակցություն հաստատելու նպատակով):

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 26 մայիսի 2023թ.